առնում էին նրան բոլշևիկ-քեմալական ազդեցության շրջանի մէջ և մի կողմից դարձնում համաթիւրքական գործունէության յենարան Կովկասում և Թուրքեստանում, միւս կողմից՝ հաղորդակցության ուղիղ ճանապարհ Մոսկուայի և Անգորայի միջև:

Բոլշևիկ-քեմալական գործակցության ուժեղացման տեսակէտից ահագին դեր կատարեց և արևելեան ժողովուրդների համագումարը Բաքուում: Այստեղ հաւաքուեցին համիսլամական և համաթիւրքական շարժման ամենակարկառուն դէմքերը՝ Էնվէր, Խալիլ փաշա, Քիւչիւկ Թալէաթ, Բէհաէդդին և ուրիշ շատ ջարդարարներ: Արևելեան ժողովուրդների համագումարը ոչ միայն միջոց եղաւ յեղափոխութեան քարոզչութեան Արևելքում, այլ և նրա մէջ հիմք դրեց բոլշևիկ-քեմալական գործնական քաղաքականութեան Առաջաւոր Ասիայում և, մասնաւորապէս, Հայաստանի դէմ: Կասկած չկայ, որ Բաքուում գործնական ձև ստացաւ և պատերազմի խնդիրը Հայաստանի դէմ. ըստ կայացած համաձայնութեան, Հայաստանի խորհրդայնացման նպաստելու դիտաւորութեամբ, Թիւրքերը պիտի շարժուէին Հայաստանի վրա մինչև Սարըղամիշ:

Բոլշևիկ—քեմալական—ազրբէջանեան գործակցութեան մասին շատ նիւթեր կան հրապարակի վրա*) և հազիւ թէ կարիք լինի երկար վկայութիւններ բերելու, բայց մի երկու փաստ, այնուամենայնիւ, արձանագրենք. 1920թ. ապր. 15-ին, Էրզրումում, Ազրբէջանի գինու. նախարարի օգնական զօր. Ալի Աղա Շիխլինսկիի և Թիւրքական 15րդ բանակի հրամանատար Քեազիմ Կարաբեքիր փաշայի միջև: Այդ համաձայնագիրը պիտի փոխարինէր 1919թ. նոյ. 29-ին, Պոլսում կնքուած, Թիւրք-ազրբէջանեան դաշնի դաշնագիրը**): Ինչպէս և այս վերջինը, Էրզրումի դաշնագիրն էլ իր մի մասով ուղղուած էր Հայաստանի դէմ:

Այդ դաշնագրի 5րդ կէտը բառացի կերպով ասում էր. «Ազրբէջանի կառավարութիւնը խոստանում է շարունակել նպաստել Խորհրդ. Ռուսաստանին և «Անատոլիայի ու Ռումելիայի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէի» միջև մերձեցումն իրականացնելու: Անհրաժեշտութեան դէպքում ինքն էլ է յարում այդ միութեան»: Հրդ յօդուածը խօսում էր Հայաստանի մասին. «Անատոլիայի ու Ռումելիայի իրաւունքների պաշտպանութեան կոմիտէն վճռականօրէն խոստանում է, որ այն դէպքում, երբ Հայաստանը յարձակում գործէ Ազրբէջանի վրա, և Ազրբէջանի կառավարութիւնը վճռականօրէն խոստանում է, որ այն դէպքում, երբ Թիւրքիայի արևելեան շրջանները կը տրուեն և կը միացուեն Հայաստանին, — այս երկու դէպքում էլ համաձայնութեան եկած երկու կողմերն էլ պաշտպանելու են միմիանց շահերը և գործելու են որպէս միացած բանակ»:

Այս համաձայնութեան առթիւ էր, որ Քեազիմ Կարաբեքիրը գրում էր իր մի նամակում. «Մեր, Ազրբէջանի և բոլշևիկների միջև կնքուած պայմանների հիման վրա, մեծ թիւ մեր սպաների, բժիշկների և պաշտօնեաների գնացել են Ազրբէջան: Բոլշևիկները մեզ առաջարկեցին անյապաղ պատե-

*) Հէնց Անգորայի 1926թ. դատավարութեան արձանագրութիւնները բաւական են հաստատելու համար, որ թիւրք-բոլշևիկեան գործակցութիւնը 1920թ. փաստ էր:

**) «Ռազմիկ», 1920թ. յուլ. 12 № 9, Երևան: